Գեղարդայ Վանք. — Aijri-vank (Monastère aux-Cavernes ou de S.te Lance.)

սանուԹեամբ երկրի տապալեալ է, այլ տակաւին մասանցն ամբողջ կալով 'ի գետնի՝ 'ի ձեռն նկարահանի արուեստագիտի ընծայէ զպատկերս զայս ճակատու դիմին. որոյ քառակուսի է ձև հաւասար չափով իբր 34 ոտք առ կողմն, և ձեղունն գմբեԹաւ աւարտեալ. ուԹ ոտնաչափ բարձր է յատակին քան զհրաբղխի գետնին յոր հիմնեալ է. երեսք նորա հային 'ի դուռն դղեկին. զճակատն վսեմաշուք բառնան սիւնք վեց յոնիականք, կատարեալ դեղով և պարզուԹեամբ ըստ հին ոճոյն, 22 և կէս ոտն 'ի բարձրուԹիւն հանդերձ վերնաքուռովն, 25 բԹաչափ շքեղապատուԹեամբ. տակաւին ողջ կան քիւքն մանր դրուագք, տերևազարդիւք և հերասպանծ առիւծագլխովք. բազմուԹիւն ջնջնջեալ սեռանցն և խոյակացն տան կարծել ԹԷ և համբէն կողմանքն սիւնազարդք էին. և յայտնապէս իսկ տեսանի այս 'ի յետին կողմին որ հայի 'ի քարագնաց հոսանս Աղատայ և տակաւ ինչ այլատարազ է քան զճակատն, մանաւանդ զարդքն ծաղկաձևք: Նոյնպէս և անդաստակ տաճարին հոծ և խիտ ունէր քանդակս և սիւնս. ստորին կողմանք տաճարին ոչ երևեցուցանեն զարդս, այլ միայն սրբբատաշ քարինս: Ի հիւսիսոյ և յարևմտից հովանոցիս կան այլ աւերակք քարաշէնք, որ Թուին բուն ապարանք խոսրովիդխտոյ, այլ 'ի քարանց հեղեղատի կառուցեալ, պարզունակ ոճով: Շարսէն Գաղթեացի որ իբր երկու դարուք յառաջ ճանապարհորդեաց եռես 'ի Գառնի և աշտարակ մի նորանշան ձևով, որոյ չերևին արդ հետք. իսկ 'ի հիւսիսոյ դղեկին կան մեծացուածք մարտկոցաձև շինուածոյ, մեծամեծ գունաք քարեղէնք նման հրաձիգ ռըմբաց, և հեռագոյն 'ի նմին կողման 'ի լեռնադաշտակի ուրեմն՝ աւերակք գիւղաքաղաքին Գառնոյ կարի ընդարձակք. որմք քարաշէն և տունք երկայնաշարք, և եկեղեցիք հինգ Թուով, որոց ոՀ շինուածոյ նման է եկեղեցեացն Էջմիածնայ. զմի յայնցանէ նորոգեալ այժմ բնակչաց տեղւոյն՝ կատարեն զսուրբ պաշտամունս. նշանաւոր է յայլսն մատուռն մի յանուն սրբոյ Կարապետին, յոյժ գեղեցիկ յօրինուածով, կիսափուլ կաԹողիկէիւ, որոյ է պատկերդ հանդիպոյ: Համբէն շքեղավայրք Գառնւոյ լի են այսպիսի աւերակք. 'ի սոցին սակի է և մեացուած բերդի մոյ 'ի քարաբլրեր մերձ յակն Աղատայ, զոր Ժողովուրդն՝ Գանձատուն Տրդատայ կոչէ:

141. Իբր ժամաւ և կիսով հեռի յարևելից հիւսիսոյ Գառնւոյ 'ի ստորոտս անձաւախիտ լերին Գեղայ որ հայի 'ի ձորն Գառնւոյ՝ կայ 'ի գաւառին Կուտեից հռչակաւոր մենաստանն Այրիվանից կամ Գեղարդայ, շքեղապատեալ լերամբք և քարաբլրովք ահաւորաք. Թուի և սա դաստակերտ կամ ժամանակակից Տրդատայ շինեցն. քանզի և ոչ յետ բազմաց յայց ելեն տեղւոյս Ս. Ներսէս և Ս. Սահակ՝ Թէպէտ և 'ի յետնոց նորոգեալ տեղւոյն միայն հիմունք պարըսպացն Թուին հինք. հիւսիսային որմն կայ 'ի բարձունս առապարի, և արևմտեանն առ 'ի շեղ բարձրացեալ, իսկ այլք ցածունք են: Կրկին մուտք են վանացն, մի անձուկ ընդ արևելս որ հայի 'ի գետակն կարկաջաահ, և միւս ըստ արևմուտս լայն և խաչազարդ: Ի մենաստանի սոսա են եօԹն եկեղեցիք զարմանաշէնք՝